

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---»-----2024թ.

N----- Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի  
N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

**Երևանի քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման հավելված N2-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Կոմունալ տնտեսության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Կոմունալ տնտեսության վարչություն			
1	վարչության պետ	1	697,000	697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000	561,000

3	Էներգետիկ տեղեկատվության հավաքագրման և կատարման պատասխանատու	1	282,200		282,200
4	Էներգետիկ տվյալների մոնիթորինգի մասնագետ	1	272,000		272,000
5	գործավար	1	248,200		248,200
-	<b>Աղբահանության և սանմաքրման բաժին</b>				
6	բաժնի պետ	1	408,000		408,000
7	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
8	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
9	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
-	<b>Կենսաապահովման բաժին</b>				
10	բաժնի պետ	1	408,000		408,000
11	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
12	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
13	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
-	<b>Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների բաժին</b>				
14	բաժնի պետ	1	408,000		408,000
15	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
16	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
17	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000

	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>25</b>			<b>8,061,400</b>
--	-----------------	-----------	--	--	------------------

2) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան» տողում «762» և «254,312,845» թվերը փոխարինել համապատասխանաբար «764» և «254,867,045» թվերով:

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2020» և «627,972,845» թվերը փոխարինել «2022» և «628,527,045» թվերով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝**

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Երևան համայնքի ավագանու կողմից հաստատված «Կայուն էներգետիկ զարգացման» և «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրերով՝ 2021թ. փետրվարին Երևանի քաղաքապետարանը ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ ստորագրել է մտադրությունների մասին հուշագիր, որի շրջանակներում մեկնարկել է Երևան քաղաքում համայնքային էներգետիկ կառավարման համակարգի (այսուհետ՝ Համակարգ) ներդրման գործընթացը:

Էներգետիկ կառավարման համակարգի հիմնական նպատակը Երևանի քաղաքապետարանի ենթակայության ընկերությունների/կազմակերպությունների շենքերում և շինություններում, հանրային լուսավորության համակարգերում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումների համակարգումն է, հարմարավետության անհրաժեշտ մակարդակի ապահովումն ու էներգաարդյունավետության ներուժի գնահատումը, վառելիքաէներգետիկ ռեսուրսների և ջրի սպառման ծավալների կառավարման, վերահսկման ու մոնիտորինգի իրականացման ապահովումը: Այն ներառելու է էներգիայի արտադրության և սպառման գործընթացների պլանավորում, կազմակերպում, սարքավորումների ու համակարգերի շահագործում և պահպանում, ինչպես նաև սպառման ցուցանիշների մշտական հասանելիություն և ծախսարդյունավետության ապահովում:

Համակարգի ներդրմամբ իրականացվելու է համայնքի տարածքում էներգետիկ հոսքերի ցուցանիշների (տեխնոլոգիական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական) համակարգված և մշտական վերահսկումն ու կառավարումը՝ սկսած էներգիայի ձեռքբերման և/կամ արտադրության, փոխակերպման գործընթացներից մինչև էներգիայի վերջնական սպառումը, ապահովվելու է համայնքի էներգետիկ կառավարման կայունությունը՝ նվազագույնի հասցնելով գործող համակարգերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ապահովվելով նաև զգալի տնտեսական օգուտներ համայնքային բյուջեի խելամիտ կառավարման համար:

Այն նպաստելու է նաև Երևան համայնքում կայուն էներգետիկ ծրագրերի պատշաճ պլանավորմանն ու իրականացմանը, հասարակական շենքերում էներգասպառման մոնիտորինգի համակարգի կայացմանը, հավաքագրված տվյալների պահպանմանը, էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացման արդյունքում՝ ձեռքբերված էներգախնայողության ու ջերմոցային գազերի արտանետումների կրճատումների գնահատմանը:

Համակարգի ներդրմամբ ակնկալվում է նաև էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգի ներդրում, համայնքային ենթակայության հասարակական շենք-շինությունների, բակային ու փողոցային լուսավորության համակարգերի և տրանսպորտի ոլորտում էներգետիկ տվյալների շտեմարանի ձևավորում, էներգաարդյունավետ արդիականացման համար նպատակահարմար օբյեկտների ընտրության չափորոշիչների և մեխանիզմների սահմանում, էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղած միջոցների նպատակային օգտագործման համար շրջանառու հիմնադրամի ստեղծում, էներգետիկ կառավարիչների և էներգետիկ պատասխանատուների վերապատրաստման նպատակով ուսումնական գործընթացների կազմակերպում, իրականացում և այլն:

Համակարգի ներդրման կարևոր բաղադրիչ հանդիսացող էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգը (այսուհետ՝ ԷԿՏՀ) ծրագրային գործիք է, որը համատեղում է շենքի ջերմատեխնիկական տվյալներն ու էներգիայի և ռեսուրսների սպառման վերաբերյալ ցուցանիշները, իրականացնում էներգաարդյունավետության ցուցանիշների մոնիտորինգ, ինչպես նաև հնարավորություն է տալիս ինքնաշխատ կերպով կազմել շենքում էներգիայի սպառման, էներգախնայողության և ջերմոցային գազերի արտանետումների (կրճատման) մասին զեկույցներ: ԷԿՏՀ-ն հասանելի է դառնալու առցանց հավելվածի միջոցով: Այն տվյալների բազայի վրա հիմնված ծրագիր է՝ բաղկացած շենքերում սպառված և/կամ արտադրված/առաքված էներգիայի (ժամային, միջին օրական, ամսական, տարեկան քանակությունների), սպառված ջրի և արտաքին/ներքին օդի հիդրոոդերևութաբանական տվյալների աղյուսակներից:

ԷԿՏՀ-ն հնարավորություն է տալիս.

- թարմացնել և պահպանել համայնքային շենքերի, բակային և փողոցային լուսավորության օբյեկտների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության բազան,
- մուտքագրել և հետևել էներգիայի բոլոր տեսակների և ջրի սպառման տվյալներին,
- տրամադրել հաշվետվություններ՝ ըստ օգտագործողի նախապատվությունների կամ գոյություն ունեցող ձևանմուշների:

ԷԿՏՀ-ի տվյալները հավաքագրվելու են՝ էներգամատակարարող ընկերությունների («ՀԷՑ» ՓԲԸ, «Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ), «Վեոլիա Ջուր» ընկերության և Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոնի կողմից էներգասպառման /բնական գազ, էլեկտրաէներգիա/, ջրի սպառման և օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավության վերաբերյալ օրական, շաբաթական և ամսական կտրվածքով տվյալների տրամադրման միջոցով:

ԷԿՏՀ-ում առաջին հերթին կներառվեն Երևանի քաղաքապետարանի ենթակայության շուրջ 320 հասարակական շենքերը: ԷԿՏՀ-ի հիմնական շահառուներ են հանդիսանալու համայնքները, հասարակական շենքերի օգտատերերը, շենքերի էներգետիկ բնութագրերի մասնագետները, էներգետիկ կառավարիչները, էներգետիկ աուդիտորները, սերտիֆիկացնող մարմինները, պոտենցիալ վարկառուները, առևտրային

բանկերը, միջազգային դոնոր կազմակերպությունները և այլ շահագրգիռ պետական և մասնավոր ընկերությունները, ինչպես նաև բնակելի շենքերի բնակիչները:

Համակարգի ներդրման հիմական գործողությունները մեկնարկել են Երևանի քաղաքապետի 2022թ. ապրիլի 5-ի թիվ 1266-Ա որոշմամբ՝ ներառելով քաղաքապետարանի ենթակայության շուրջ 320 ընկերությունների/կազմակերպությունների հասարակական շենք շինությունները (մանկապարտեզները, առողջապահական հիմնարկները, գրադարանները, երաժշտական և արվեստի դպրոցները, թանգարաններն ու թատրոնները, մանկապատանեկան ու մշակութային կենտրոնները, մարզադպրոցներն ու վարչական շենքերը, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության այլ ՀՈԱԿ-ներ և ՓԲԸ-ներ): Որոշման համաձայն ստեղծվել է համակարգող աշխատանքային խումբ՝ քաղաքապետի առաջին տեղակալի, քաղաքապետի պաշտոնակատարի ղեկավարությամբ:

Հարկ է ընդգծել նաև, որ ըստ ՄԱԶԾ և Քաղաքապետարանի միջև կնքված հուշագրի ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի գործառնական ավարտից հետո, Երևան համայնքն էներգետիկ կառավարման համակարգի բնականոն և շարունակական աշխատանքներն ապահովելու համար ստանձնել է պարտավորություն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքում ստեղծել էներգետիկ տեղեկատվության հավաքագրման և կատարման պատասխանատուի ու էներգետիկ տվյալների մոնիթորինգի մասնագետի ոչ համայնքային ծառայության հաստիքային միավորներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ համայնքի էներգետիկ կառավարման աշխատանքներն առավել արդյունավետ և հասցեական կազմակերպելու նպատակով առաջարկվում է կոմունալ տնտեսության վարչության հաստիքները լրացնել թվով 2 միավորով, մասնավորապես՝ 1 էներգետիկ տեղեկատվության հավաքագրման և կատարման պատասխանատու, 1 էներգետիկ տվյալների մոնիթորինգի մասնագետ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝**

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**